Արձանագրություն N03

ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 շ.
26.05.2026թ. ժամը՝ 09:30
Նիստին մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
Նախագահ՝ Ն. Աբազյան
Անդամներ՝ Հ. Մելքումյանս ,Ա. Սարիբեկյան,Ա.Ռուբենյան, Մ. Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա. Գարսևանյան

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ն. Աբազյան

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝0

2. Հաղթող ճանաչված ընկերության կատարված աշխատանքների և անգործության վերաբերյալ՝

2026 թվականի մարտի 18-ին Ակունքի համայնքապետարանի կողմից ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01 ծածկագրով <<ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ>> ձեռքբերման նպատակով կազմակերպված գնանշման հարցման ընթացքում հայտ էին ներկայացրել 11/տասնմեկ/ ընկերություն՝ <<Ա.Ա.Մ. 33>> ՍՊԸ, «Ռ ԵՎ Հ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ ԵՎ «ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ, <<ԲԱԼԱՀՈՎԻՏ 1>> ՍՊԸ, <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ, <<ԳԱՌԱՆՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ, <<Եվրո Թեքնիքս>> ՍՊԸ ԵՎ <<Էմթիեյ>> ՍՊԸ ՀԳ, <<ԿՈՏԱՅՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ>> ՍՊԸ, <<ՃԱՆԱՊԱՐՀ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ, <<ՈՒՐԲԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ>>ՍՊԸ, <<ՈՒՐԲԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ>>ՍՊԸ, << Ս.Տ.Ս ԳՐՈՒՊ>> ՍՊԸ և <<Ֆ Տ Դ-ՇԻՆ>> ՍՊԸ:

Ընտրված մասնակից է որոշվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից 1-ին չափաբաժնի համար նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը՝ <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ն:

ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01 ծածկագրով <<ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ>> նախահաշվային գինը կազմում է 9 645 336 /ինը միլիոն վեց հայուր քառասունհինգ հազար երեք հարյուր երեսունվեց/ ՀՀ դրամ, <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գինը 6 465 000 /Վեց միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ է, ներառյա ԱԱՀ-ն:

ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01-01 ծածկագրով պայմանագիրը կնքվել է 01/04/2026թ-ին և տրվել աշխատանքների մեկնարկը: 2026թվականի ապրիլի 29-ին Ակունք համայնքի Ակունք, Նոր գյուղ, Կոտայք ,Կապուտան և Զառ բնակավայրերի մի շարք գլխավոր ճանապարհների երթևեկելի մասերում ճանապարհների քանդված, ճաքած, մասերը կտրվել, մաքրվել են և սակայն միայն 2026թվականի մայիսի 20-ին Ակունք համայնքի

Նոր գյուղ բնակավայրի Աբովյան-Նոր գյուղ-Մայակովսի ճանապարհահատվածի հատման վայրից մինչ Ակունք համայնք գյուղ Նոր գյուղ 6-րդ փողոց թիվ 2/1 շինության հարակից տարածք կատարվել են փոսային նորոգման աշխատանքներ, իսկ մնացած հատվածներում մինչ օրս ոչ մի աշխատանքներ չեն կատարվել:
2026թվականի ապրիլի 29-ին Ակունք համայնքի Ակունք, Նոր գյուղ, Կոտայք ,Կապուտան և Զառ բնակավայրերի մի շարք գլխավոր ճանապարհների երթևեկելի կտրված մասերը 28 օրվա ընթացքում քայքայվել են և առաջացրել խորը փոսեր, որոնք խանգարում են բնակչության բնականոն տեղաշարժին:

2026 թվականի մայիսի 12-ին <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ին գրավոր ծանուցվել է, որ , եռօրյա ժամկետում կատարել <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01-01>> ծածկագրով պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները՝ <<Ակունք համայնքի փոսային նորոգման աշխատանքները>>, հետագա խնդիրներից խուսափելու համար և <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ի կողմից 2026թվականի մայիսի 13-ին պատասխան գրությամբ մեզ տեղեկացրել է, որ մայիսի 15-ից պարտավորվում է շարունակել և պատշաճ, պայմանագրի դրույթներին համապատասխան կատարել ծավալաթերթով նախատեսված աշխատանքները սույն թվականի մայիսի 15-ից, սակայն մինչ այժմ <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ն դրսևորում է բացառապես անգործություն և խաթարում Ակունքի համայնքապետարանի բնականոն աշխատանքը և բնակչության տեղաշարժը:

Ն. Աբազյան

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝0

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Գարսևանյանին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ Ն. Աբազյան _____

Անդամներ՝ Հ. Մելքումյան _____

Մ. Սարիբեկյան _____

Ա. Ռուբենյան _____

Մ. Հովհաննիսյան _____

Քարտուղար՝ Ա. Գարսևանյան _____